

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлисе, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Սովորաբար թիւերը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ի Գ Ս Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻՍՏՆԻՑԻՆ

Օգնութեան գործի առիթով. Պարսից Շահի հեռագիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երևանի խոստովութիւնները. Երկու խօսք փախչողներին. Բագուի կոտորածը. Բագուի աղէտի գոհերի օգտին. Բագուի կոտորածի հայ գոհերի ցուցակը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԱՌԻԹՈՎ

Բագուի աղէտից վնասվածներին օգնելու համար ներկայումս Թիֆլիսում գործում են երկու հիմնարկութիւն՝ մի յատուկ յանձնաժողով, որ հաստատված է Վեհափառ Կաթողիկոսից և Թիֆլիսի քաղաքային ու պարլաման. իսկ Բագուում նոյն գործով զբաղված են Բագուի Մարդասիրական ընկերութիւնը և յատուկ հաստատված մի մասնաժողով:

Թիֆլիսում արդէն մի քանի հազար ռուբլիներ են ծախսված վնասվածներին վրա և շատ կարիքաւորներ ստացել են նախնական օգնութիւն: Մի քանիսը վերադարձել են Բագու և անձնատուր եղել իրանց գործերին:

Պէտք է նկատել, որ առաջին օրերում նպատակն էր բացառապէս այնպիսի անձեր, որոնք իսկապէս կարիք ունեն և առանց կողմնակի օգնութեան կը դժուարանային իրանց կարեւոր պիտոքները և ծախսերը հոգալ: Այդ առաջին օրերում շատ կարօտեայններ նոյն իսկ բազմաթիւ էին զինելու նպատակով: Մտացուցիկ հիմնարկութիւններին, որովհետև սովոր չեն եղել երբէք ձեռք պարզելու ուրիշին: Բայց կարիքը ստիպեց զիմուներ անել և նրանք արին:

Այժմ ևս իսկական կարօտեայնները շարունակում են զիմել օգնութեան: Մարկային մենք լինելով ենք համարում մասնաջոյց լինել մի տխուր երևոյթի վրա, որ ասպարէզ եկաւ վերջին օրերում: Այդ այն է, որ իսկական կարիքաւորներին հետ միաժամանակ գալիս են օգնութիւն խնդրելու և այնպիսի անձեր, որոնք կամ բոլորովին ապահովված մարդիկ են և կամ ամենին կապ չունեն Բագուի հետ և ուզում են փող կորզել խարբայութեամբ:

Նպատակաւոր յանձնաժողովները միջոցները ներածին չափ աշխատում են ստուգել զիմողների անձնաւորութիւնները և վիճակը. բայց, անկասկած, նրանք անկարող են ազատ մնալ սխալներից, քանի որ նրանք գործում են Թիֆլիսում և ամեն մի անձի վերաբերութեամբ չեն կարող լրակատար քննութիւն անել: Զգուշութեան համար մի քանիսին, փոխանակ տալու կանխիկ փող, տուել են երկաթուղու տոմսակ, բայց յայտնի են դէպքեր, երբ տոմսակ ստացողը ծախել է տոմսակը ուրիշին և փողը դրել էր դրամարկ:

Մենք սրտի կակիծով արձանագրում ենք այս փաստերը, զգուշացնելով խարբայի անձանց, որ նրանք իրանց անբարոյական վարմունքներով չը վնասեն և իսկական կարօտեայնների օգնութեան գործին, մտածելով նպատակաւոր յանձնաժողովի անդամների մէջ չափազանց մեծ կանխածանութիւն դէպի նրանց զիմողները: Մեզ հաղորդել են մի քանի ապահով մարդկանց ցուցակ, որոնք զիմել են օգնութիւն ստանալու: Մենք, ի հարկէ, չենք հրատարակի այդ անունները:

Դարձեալ յիշեցնում ենք, որ պէտք է ազնուութեամբ և սրբութեամբ վերաբերվի նպատակաւոր գործին և չարատուրել նրան խաչագողական վարմունքներով:

Յանձնաժողովները էական օգնութիւն

ներ են արել և մի խանգարէք, որ նրանք կարողանան աջողութեամբ շարունակել մինչև վերջը: Դրանք բացառութիւններ են անշուշտ, բայց շատ ցաւալի է, որ այդ բացառութիւններն էլ տեղի ունեն մեր մէջ:

ՇԱՆՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը հետեւեալ հեռագիրն է ստացել Նորին Մեծաութիւն Սուրբաֆէր-Էղղին Շահինց.

«Նորին Սրբութիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Ես ինքս շատ վշտացած եմ Բագուի դէպքերից: Երջանիկ եմ հաստատելու, որ Պարսկաստանի հայերը օրինական հպատակներ են, որոնց համար ես կարող եմ Ձեզ հաւաստիացնել ամբողջ իմ բարեացակամութիւնս և բարձր պաշտպանութիւնս»:

Սուրբաֆեր-Էղղին

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Ա. Մ. Ո. Ի. Լ.

Կովկասեան փոխարքայութեան վերանորոգման առիթով «Новое Время» լրագիրը խօսում է կոմս Վորոնցով-Դաշկովի մասին, որ, ինչպէս յայտնի է, պիտի նշանակվի փոխարքայ: Յիշեցնելով թէ ինչ անգին շինարար դեր է կատարել Կովկասում 40-ական և 50-ական թւականներին հոչակաւոր փոխարքայ Վորոնցովը, լրագիրը կանգ է առնում այդ հմուտ և բարեացակամ վարչական անձի գործունէութեան եղանակի վրա և յայտնում, որ մի և նոյն տոնմի անգամ կոմս Վորոնցովը Դաշկովը նոյնպէս կը կարողանայ խաղաղացնել Կովկասը, վերանորոգելով նախկին վորոնցովեան ժամանակը, երբ երկրի իշխանութեան բարձր ներկայացուցիչը մօտ էր հասարակութեան խաւերին և վերաբերվում էր ամենին հաւատով ու վստահութեամբ: Այժմեան փոխարքայ, ասում է լրագիրը, դեռ այս քանի օրերում ողջունվից Մոսկվայի զեմսովոյի կոմիտէն այն պատճառով, որ Կարմիր Նաչի գործունէութեան մէջ գործօն դեր կատարելու համար հրաւիրեց հասարակական հիմնարկութիւնների կողմից ընտրված ներկայացուցիչներին:

Իսկական կարգի այս ամենայնալի դաշնակիցների օգնութեամբ աշտուրութիւնը ամեն տեղ ապահովված կը լինի: Ամբողջ սրբից ցանկանում ենք տանջված Կովկասին շուտափոյթ և կատարեալ խաղաղացում արքայութեան և դէպի անձնաւորութիւնը տածած յարգանքի սկզբունքները վրա, առանց ազգայնական խարսխութիւնների:

Եթէ «Новое Время» ունի յայտնի նշանակութիւն, դա, ինչպէս գիտէք, այն է, որ նա բաւական անսխալ կերպով արտայայտում է բարձր վարչական շրջանների տրամադրութիւնը:

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ի Փետրվարի 23-ին

Երէկ, հայ և թուրք հոգևորականութիւնների կազմած թափօրից յետոյ, շուկան նորից փակ մնաց և թէպէտ ընդհարումներ տեղի չունեցան, չը նայած որ փողոցները լի էին խուճը խուճը հաւարված ժողովուրդով, բայց և այնպէս սպանութեան մի քանի դէպքեր դարձան տեղի ունեցան: Մի քանիսը հայ սպանվեց Եջմիածին տանող ճանապարհի վրա, քաղաքի սյուրների մէջ: Եւ քաղաքի «Կօնդ» անուանված մասում մի քանի հայերի և թուրքերի ընդհարման ժամանակ սպանվեց մի թուրք և վերաւորվեց մի այլ թուրք: Գիշերը անցաւ խաղաղ, առանց որ և է միջնադէպի, ինչպէս և նախորդ գիշերները: Փողոցների դա-

տարկութիւնը և խոր լուսթիւնը կարծէք գուշակել էին տալիս մի ծանր պատուհաս մեռած քաղաքի համար:

Այսօր դրութիւնը երէկվանից շատ քիչ փոփոխութիւն կրեց և ժողովուրդը նախ չէր համաձայնում խնտութիւնը բանալ, կարգը պահանող մասնաժողովի անդամների յորդորների շնորհիւ հազիւ մի մասը միայն մի քանի ժամով խնտութիւնը բացեց և նորից կողպեց: Թէ և թափօրը որոշ չափով թողել էր իր ազդեցութիւնը, և այսօր հայ և թուրք մօտեցում միմեանց և բարեկամական խօսքեր էին ուղղում, բայց և այնպէս այն չափով վստահութիւն չէին տածում դէպի միմեանց, որ կարողանային խնտութիւնը բանալ, մասնաւոր այն տեղերում, ուր առևտուրը խան է:

Այժմ իշխանութիւնը զբաղված է խոտովութիւնների և առհասարակ արեւնահեղ դէպքերի պատճառ եղողների քննութեամբ. այդ բանը լիովին լուսաբանելու համար ցոյց է տալիս իր աջակցութիւնը նաև երկու ցեղերից կազմված մասնաժողովը—և ընդհանուր համազօրութիւն է, որ մասնաժողովին միանգամայն հնարաւոր է այդ բանը, եթէ միայն նա ուզենայ և չը բաշտի անել:

Թողնելով այդ մասին մի ամիտի և լրիւ անդիտութիւն տալը, երբ խնդրը բաւականաչափ կը պարզվի, առ այժմ այն կասեմք, որ Երևանի դէպքերի պատճառը, նոյն իսկ թուրք հասարակութեան խոտովանութեամբ, կղկ է այն անհանգիստ տարրը, որը բուն ունի դրած դաշնախաններում և ահա այդ որջերի և նրանցում ընտանիք կազմող դասի վրա կանգ է առել քննութիւնը:

Մեր այս ծանր օրերի տպաւորութեան մէջ վիշտ պատճառեց այն հեռադրական լուրը, որ իբր յուզումը անցել է արդէն Կովկասից Պարսկաստան, մասնաւորապէս Քարբիլ: Առաջնորդը զիմեց այստեղի պարսից հիւպատոսին, միայն հեռագրով զիմել Քարբիլ կուսակալին այդ առիթով: Այստեղից այդ բանը յայտնվեց նաև Վեհափառ Կաթողիկոսին:

Այստեղ լուր հասաւ Բաշտրաշէնի ընդհարման (Շարուր-Դարալագեհայի գաւառ) մասին, բայց բարեադրաբար չը հաստատվեց այդ բանը: Սակայն շուկայի մէջ երկու հայերի սպանութեան լուրը հաստատվեց և այս դէպքը կատարվել է Բագուի և Երևանի ընդհարումների տպաւորութեան տակ:

Առ այժմ շրջակայքում դրութիւնը խաղաղ է:

II

Փետրվարի 24-ին

Այսօր քաղաքային խորհրդի կողմից ընտրված մի պատգամաւորութիւն, իր հետն ունենալով քաղաքային, այնպիսի զանազան նախնադպակտիւն, գործերի հրամանատար Օրբելիանուն, հայոց առաջնորդին, թուրքերի դազիին և պարսից հիւպատոսին, քաղաքի կողմից յայտնեցին շնորհակալութիւն նրանց ձեռք առած հոռու ընդհարումների և բարի յորդորների համար, որոնց շնորհիւ հնարաւոր եղաւ հայ և թուրք ժողովուրդների մէջ տեղի ունեցած ընդհարումների առաջն անհել: Այսպիսի շնորհակալութեան արժանի էր մասնաւոր զօրքերի հրամանատար Օրբելիանին:

Բացի դրանից, քաղաքային խորհուրդը, ի նկատի ունենալով ընդհարման զոհերի ընտանիքներին օգնութիւն ցոյց տալու անհրաժեշտութիւնը, որոչից այդ նպատակին յատկացնել քաղաքի միջոցներից 500 ռ., որը կը միացվի քաղաքում սկսվելիք հանգանակութեան 54 վերաւորված և սպանվածների ընտանիքների օգտին: Այժմ մի մարմին զբաղված է այդ հանգանակութեան և նպատակներ բաժանելու գործով:

Չը նայած այն բանին, որ ընդհարման առաջին դէպքերի անցել է 4 օր, բայց և այնպէս երկու ցեղերի հայերի և թուրքերի մէջ փոխադարձ վստահութիւնը դեռ ևս լիովին չէ վերականգնված և այսօր նորից շուկան կիսով չափ միայն կենդանութիւն էր ցոյց տալիս: Սնտութիւնը, այն էլ մի մասը միայն,

մի քանի ժամով բացվեցին և նորից փակվեցին: 4—5 օր շարունակ առևտուրը կանգ է առել և զործը դադարել, կենսական մթերքներ, հաց և միս, բաւական ձեռք չէին ընկնում, գները բարձրացրել էին և ահա այս բոլոր ծանրութիւնը աւելի զգալի էր չքաւոր դասին, օրկական աշխատանքի յոյսով ապրող ազգաբնակիցներին:

Քաղաքի մէջ այժմ էլ չըլուծւում են պահապան զինուորների խմբեր, մասնաւոր որ տեղի են ունենում զողովութիւններ: Այսօր յայտնի եղաւ, որ մի հայի խնտութիւնը զողպեց ևս փող և ապրանքներ:

Այսպիսի խան և փոթորկալից դրութեան ժամանակ տեղի ունեցան նաև գոհեր, որոնք հեռանք էին զէնքերի հետ անզօր զարկելու անխուսափելի պատանաբններին: Եւ հեշտ չէր մի ամբողջ քաղաք իր 25—30 հազար բնակիչներով առողիկ վիճակի մէջ գտնվելը, այն էլ 4—5 օրով: Բողբը անխտիր, թէ հայ և թէ թուրք, թէ հարուստ և թէ աղքատ, որքան հնարաւոր էր, աշխատում էին զինվել, ինքնապաշտպանութեան համար ձեռք բերել որ և է մի զէնք, լինէր դա հրացան, ատրճանակ, դաշոյն թէ մի նոյն իսկ շաւիուրի կրտոր, ինչպէս ասում են: Այսպիսի անզուրկութիւններ շատ տեղի ունեցան և նրանցից մէկին զոհ գնաց մի 18—20 տարեկան օրիորդ—Յովհաննիսեան, իր ազգական երիտասարդի ձեռքից բացված ամբողջական զնդակը ընդունելով իր պարանոցի մէջ:

Ա.—Դօ

ԵՐԿՈՒ ԽՈՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—Ո՞ւր էր փախչում և ունեցից: Այս հարցը հնար չը կար տալու մի քանի օր առաջ, երբ սարսափների անմիջական ազդեցութեան տակ իր զուլուր ազատում էր նա, ով հնար ունէր:

—Ո՞ւր էր փախել և ունեցից: Այս հարցը պէտք է և կարելի է տալ այժմ, երբ հնարաւորութիւն ունենք իրերի վրա աւելի հանգիստ սրտով նայելու և միմեանց հետ փոխանակվելու:

Եթէ ի նկատի ունենանք նաև այն, որ սարսափներ իսկական օրերին շատ բնիւն են հնարաւորութիւն ունեցել փախչելու, այլ միայն սարսափներ անցնելուց յետոյ, հարտութիւն կայացնելուց յետոյ է փախել մեծագոյն մասը Բագուից—այսպ ուրեմն իրաւացի կը լինի առաջարկած հարցը:

Յիրաւի, միթէ համոզված և հաւատացած էր զէթ այժմ, թէ թուրքերը նպատակ էին դրել բնաջինջ անել հայերին, կամ, միթէ, թուրքերը, մեր դարաւոր զբացիները և բաղդակիցները in corpore վայրագ և արեւնահաբաւ մասնա ևս կազմում: Չէ որ, եթէ այդպէս լինէր, այն ժամանակ հայերը տասնեակ հազարաւոր զոհեր կը տային:

Փախուստը, առհասարակ, գովելի բան չէ, Փախուստը հասարակական դժբաղդութիւնների ժամանակ—արդէն դատապարտելի է: Նայեցէք, փախուստիւնները, ձեռք առաջնաբաժն արեւնահաբաւ մասնա իր վրա. մինչև այժմ փակ են ձեռք անհարանների դռները և դուր կորած անյայտութեան մէջ:

Աւազակները կողպուում են և հնար չէ լինում որոշել, թէ ինչ է կողպուվել և որքան:

Տնտեսները յայտնում են, օրէնքի հիման վրա, ձեռք երկար ժամանակվայ բացակայութեան մասին ոստիկանութեանը, որը ինքն է արձանագրում ձեռք իրերը և իր պահպանութեան տակ վերցնում: Իսկ յայտնի է, թէ այդպիսի պահպանութիւնները որքան թանկ են նստում:

Տունը հրդեհ է ընկնում.—հնարաւորութիւն չը կայ ֆասաը որոշելու, թէ ևս զոյրը ապահովագրած է,—որովհետև ինքն բացակայ եւ Կոմիսիաները կամեցում են ձեռք որոշել զոհերի և վնասների չափը—դարձեալ մեծ մասամբ փակ դռները են հանգիստ, կամ



կին կատարած հոգեհանգստից յետոյ, տեղական ազգայնականութիւնը ժողովրդիկ երկրեցու գաւթիքը, բարոյական պարտքը դրեց մեզ վրայ, դիմել երգուեալ հասարակականութեան յանձնաժողովին, յայտնելով մեր գաղտնիքը և խորին արհամարհանքը եղբայրասպան կոտորածի պատճառ եղողներին: Ի սրտէ ցանկանում ենք կատարել աջողութիւն յանձնաժողովի ազնիւ ջանքերին՝ պարզելու ճշմարտութիւնը, որ պէտք է պայտահտեալ ծառայէ որպէս առհասարակ մեր հայրենի Կովկասի բոլոր ազգերի եղբայրական միութեան: Ելմիտանի գաւառը կարող էր վրէժխնդրութեամբ վառվել և բռնկվել մի որ և է տեղ, սակայն հայերի հասկացող գասակարգը, լուրճունելով Բազուի կոտորածի սեպտեմբերին, անմիջապէս մտաւ դիւրական բոլոր խաւերի մէջ և խորհուրդներով ու խրատներով կարողացաւ համոզել հայերին, որ պարսիկներին հետ աշխատանք ապրել միշտ խաղաղ և եղբայրական սիրով: Եւ այդ կատարում են և պարսիկ խաներն ու բեկերը պարսիկների մէջ: Այս դէպքում մեծ գործ կատարեց նաև տեղիս նոր գաւառապետ պ. Լեւոնիստանը, որ շարունակ հրաւիրում է իր մտա հայ և պարսիկ աչքի ընկնող և ազդեցիկ անձերի և պարսաւորեցնում է սէր ու խաղաղութիւն տարածել հայ և պարսիկ գիւղացիներին մէջ: Եւ պէտք է ասել, որ մինչև այսօր ոչ մի առիթ չէ եղել ընդհարվելու և մեր գաւառի հայն ու պարսիկը ապրում են միմեանց հետ սիրով:»

ԳԱՆՁԱՎԻՑ մեր թղթակից Ս. Տ. Ա. գրում է մեզ հետևելով. Երբեք վախճանվեց մեր համայնաբանաւարտ ինտելիգենտներէջ Իվան Մանուէլեան Ամիրխանեանցը, որը ծառայել է իր հայրենի քաղաքին նախ իբրև քաղաքային դուռայի ձայնաւոր ու յետոյ, մինչև մահը, իբրև քաղաքային վարչութեան պաշտօնակց: Հանդուցեալ Ամիրխանեանցը 80-ական թուականներին վերջերում աւարտելով Սարգիսի համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական բաժինը, վերադարձաւ իր հայրենի քաղաքը վարդապետի յոյսերով, նրան ծառայելու տենչով տեղակալ գեներալի ռուսացի պաշտօնում: Բայց նրան պարզ հասկացքին, որ այդպիսի պաշտօն նա կարող է ստանալ իր ծննդավայրէջ շատ հեռու տեղերում... Ինչ որ դիտուեցին ու անհիմն կասկածներ նրա ու նրա պէս շատ օգտաւէտ անձանց առաջ փակում էին միշտ հայրենի միջավայրում գործելու ասպարէզը: Ամիրխանեանցը, որը կարող էր շատ փայլուն կարիերա ստեղծել իր համար հայրենիքից հեռու տեղերում, չը բաժանվեց Գանձակից. իր համեստ ոյժերով ծառայեց նրան մինչև մահը ու ինչու գերեզման յուսախաբված դեռ երիտասարդ, թարմ ու ծաղիկ հասակում: Հանդուցեալ Իվան Ամիրխանեանցը իր բարի, հեղ ընտրութեան շնորհով հաւասարապէս յարգված էր տեղական թէ հայ և թէ թուրք հասարակութեան շրջաններում:»

ՉԱՐՁԱՎԻՑ մեզ գրում ին. «Բազում պատահած առեւելի փոթորակի լուրը այստեղ հասնելով տեղիս հայ և պարսիկ մի բանի բանի մայ մարդիկ բարբառ առարկեցին, որպէս զի այստեղ էլ չը կրկնվի այդ եղբայրասպան հեղինակագործութիւնը, միասին հոգեհանգիստ կատարել: Ուստի փետրվարի 20-ին, կիրակի օրը, տեղիս հայ հասարակութիւնը, գրուս ունենալով Մերվ քաղաքի քահանայ Ա. Պապուկեանին, որը եկել էր ժամանակաւոր այստեղ, դիմեցին զէպի պարսից մզկիթը, որտեղ մօլան արդէն պարսիկ հասարակութեան հետ հաւաքված էին: Հայ և պարսիկ հասարակութեան խուռն բազմութեամբ մզկիթում հոգեհանգիստ կատարվեց, Բազում սպանված պարսիկների համար: Պարսիկ մօլայի ազգու բարեղ մեծ ազդեցութիւնը թողեց բոլորի վրայ: Գանձակ Պապուկեանը կարճ կերպով խօսեց և հասկացրեց այդ սպանութիւնների պատճառով կրած մեծ վնասները: Մզկիթից խուռն բազմութիւնը դիմեց զէպի տեղական հայոց ազգութեանը, որտեղ նոյնպէս կատարվեց հոգեհանգիստ: Հոգեհանգիստների ժամանակ ներկայ էին տեղիս կոմիտայնոսը և մեծ թուով հայ գիւնդները:»

ՄԻՄՅԵՐՈՊՈՒՑ գրում են մեզ հետևելով. «Անցեալ անգամ հազարած էի, որ տեղիս պատգամաւորների ժողովը կամենում է Բաբելոնի համեստ երեկոյթով հիւրասիրել տեղիս սիրողներին երգեցիկ խմբին: Երգեցիկ խումբը միաձայն վճեց յայտնել պատգամաւորներին ժողովին իր խորին շնորհակալութեանը:»

Թուրքները, վերոյիշեալ կայանալը երեկոյթի համար, և խնդրել երեկոյթի համար հանգանակած գումարը, խմբի կողմից ուղարկել «Մշակի» խմբագրութեան, ի նպատակ Բազուի վերջին սոսկալի դէպքերին զոհ գնացածներին:»

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՊԱՅՆՈՒՄԻ ԾՈՒՐՁԸ**

Մուկղեկի մօտ նախատեսար. «Руч. Вѣдомостѣ» լրագիրը դեռ փետրվարի 21-ի համարում իր առաջնորդող յօդուածում խօսելով Մուկղեկի մօտ տեղի ունենալի ճակատամարտի մասին, հետևեալն է ասում. «Բրակախութիւնը անցաւ բոլոր ակնկալութիւններից և Մուկղեկի ձիւնաշատ դաշտերի վրայ որոտաց մի սարսափելի փոթորիկ. առաջիկայ ճակատամարտը Խուսիսի հիւսիսային ափում խոստանում է լինել ամենաարեւմտեան, որպիսին միայն դիտել պատմութիւնը: Դեռ փետրվարի 14-ին ոչ մի բան, կարծես, չէր յայտնում թէ Խուսիսէ գետից զէպի արևմուտք գործերի դրութեան մէջ փոփոխութիւն է առաջ եկելը:»

Երէկ Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը հաղորդեց հետևեալը փետրվարի 24-ից. «Երէկ ճակատամարտը մղվում էր ամբողջ ճակատի վրայ աջող կերպով հաջողանացիների համար, որոնք յետ մղեցին ռուսներին կարևոր դիրքերից: Գիշերը Կուրպուսկինը ստիպվեց հեռանալ: Օրուի բանակը շրջանում մնացին 8000 ռուս սպանվածներ: Մնացած երեք զօրքերը երեք անգամ աւելի շատ կորուստ պատճառեցին: Եսպանական կորուստները հաշուում են 50,000: Միասին, երկու կողմից ընկել են 100,000 մարդուց աւելի: Մանրամասնութիւններ դեռ չը կան, Մուկղեկը դեռ դամբում է ռուսների ձեռքում: Գրաւելով Մալուսգուտանը, եսպանացիները յետ մղեցին ռուսներին Տետից: Օյաման հրաման արձակեց ամբողջ բանակում, արգելելով իր զօրքերին մասնել Մուկղեկ խմբերով, պարտաւորեցնելով յարգանք ցոյց տալ չինական կայսերական ընտանիքի շիրիմներին և պահպանել ընտանիքների բարեկեցութիւնը:»

Այսօրվայ հեռագիրները արդէն յայտնում են, որ եսպանացիները գրաւեցին Մուկղեկը: Չենք կարծում, որ երբ և իցէ պատմութիւնը արձանագրած լինի իր էջերում այնպիսի մի սոսկալի ճակատամարտ, ուր ընկնէին հարկը հազար մարդիկ: Երբ պէտք է վերջ լինի այդ անօրինակ արեւմտեղութեան և մարդկային հեղատուներին:»

**«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՄԳԻՐՆԵՐԸ**

**ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ**

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիւնդերալ-ադուտանտ Կուրպուսկինի հեռագիրը Երբեք Կայսերական Մեծութեան Առաւելով փետրվարի 24-ից. «Երբեք նամին որ և է լուրջ կռիւ չը մղեց մեր դիրքերի արևմտեան և հարաւային ճակատներին դէմ: Երեկոյեան ժամը 10-ին ես զեկուցում ստացայ, որ թշնամին կուով գրաւել է Կուրպան գեղը, Մուկղեկից 20 վերստ արևելք: Թշնամու շանքը կենտրոնացած է եղել մեր հիւսիսային ճակատի դէմ՝ զէպի Մուկղեկ և երկաթուղին անցնելու նպատակով: Միտայց զի դիւրը, Մուկղեկից 6 վերստ հիւսիս-արևմուտք, եսպանացիների ձեռքին է եղել, բայց այժմ մարքված է: Տխեյնիտան գեղը մօտ դեռ մինչև այժմ—երեկոյեան ժամը 10-ը կը գրաւէ շարունակվում է: Մենք գրաւեցինք 2 գնդաձիգ և բաւական թիւով զեկերներ: Եարուսակովում է եսպանական ուժերի տեղափոխութիւնը զէպի հիւսիս: Եսպանական զօրքերը գրաւել են Տասինտունը, Խուսիտալ կայսերական Մեծութեանը:»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիւնդերալ-ադուտանտ Կուրպուսկինի ամենապատակ հեռագիրը Երբեք Կայսերական Մեծութեան ասուեալով. «Փետրվարի 25-ի գիշերն սկսվեց բոլոր բանակներին յետ քաշվելը: Գիշերը կռիւ տեղի չընեցաւ, բայց հրացանաձգութիւնը շարունակվում էր ամբողջ գիշերը: Վերգրեանի մասին ամենապատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը:»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մինիստրների Կոմիտէն խորհրդակցութիւն ունեցաւ 1905 թ. փետրվարի 28—31-ին այն որոշումների մասին, որոնք վերաբերում են արդիւնաբերողներին

և բանւորների յարաբերութիւններին. որոշվեց 1 ա) ղեկավարել արդիւնաբերողներին և նրանց բանւորների փոխադարձ յարաբերութեան խնդիրները, որոնք միջոցները գործարանական օրէնսդրութեան հեռուոր գործարանը նպաստելու, նոյնպէս և տեղի վրայ գործարանական տեսչների միջոցով գործարարի նահանգապետների վերահսկողութեան տակ, գործարանատէրերի և բանւորների փոխադարձ յարաբերութիւնների կանոնաւորման վրայ այդ գործը առաջիկայ նման լինելու է Ֆինլանդիայի մինիստրութեան ձեռքին և գործարանական ինսպեկցիայի պաշտօնեաները նրան են նպատակվում: բ) գործարանատէրերի և բանւորների միջև յարաբերութիւնների որոշումը պէտք է կարգադրվի օրէնսդրական կարգով, այդ պատճառով էլ այդ յարաբերութիւնների ոչ մի կազմակերպութիւն, որ օրէնսդրով նախատեսված չէ, չը պէտք է թոյլատրվի: Եւ թոյլ տալ ֆինլանդիայի մինիստրին անյապաղ ձեռնարկել հետևեալ հարցերի մշակմանը: ա) Այն կազմակերպութիւնների մասին, որոնք պէտք է լուծեն արդիւնաբերական հիմնարկութիւններում վարձման մասին ծագած հարցերը, նոյնպէս և գործարանների բանւորների դրութիւնը բարելաւելու: բ) 1895 թ. յունիսի 2-ի օրէնքի որոշած չափից աւելի բանւորական ժամանակը կրճատելու մասին: գ) գործարարների մասին գոյութիւն ունեցող որոշումների փոփոխումները: դ) բանւորների բռնկական օգնութիւն սպանողակցելու մասին, նոյնպէս և այդ հարցերը քննելու ժամանակ ծագել կարողացող ուրիշ հարցեր, որոնց թւում և գործարանական վերատեսչութեան իրաւունքների և պարտականութիւնների խնդիրները: Յ. Յիշված առարկաների մասին օրէնսդրութեան ներկայացնելու կազմակերպութեանը ֆինլանդիայի մինիստրին նախազանութեամբ և Բարձրագոյն նշանակված ու կարևոր վարչութիւնների ներկայացուցիչներին անդամակցութեամբ: ժամանակորով վրայ պարտականութիւն է դրվում գործարանատէրերից և բանւորներից բացառութիւններ ընդունելու: կ) չինական կայսերական այդ յանձնաժողովում այնպիսի անձերի, որոնք յայտնի են բանւորական հարցի մասին իրանց գրեւծքերով կամ նոյն հարցի գործնական միջակի հետ Ռուսաստանում, նոյնպէս և այն բոլոր անձերին, որոնցից շօշափելի օգուտ կարող է ստանալ յանձնաժողովը: Վ. Մինիստրների թիւրյաւարել իրագործութեան տարու իրանց ընտրած անձերին յանձնաժողովում արտայայտելու իրանց վարչութեան վերջնական կարծիքը, ազատելով ֆինլանդիայի մինիստրին աւելորդ գործարարութիւններից: Վ. Յանձնել ֆինլանդիայի մինիստրին անյապաղ ներկայացնել յանձնաժողովի մշակած օրէնսդրութեան Պետական խորհրդի բարեհայեցողութեանը: Կոմիտէն այդ որոշումը արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան 1905 թ. փետրվարի 20-ին: ՏՕԿԻՐ, 25 փետրվարի: Այսօր առաւօտեան 10 ժամին եսպանացիները գրաւեցին Մուկղեկը: ՏՕԿԻՐ, Ռուսների յետ նահանջման սկսվեց փետրվարի 21-ին երեկոյեան: Փետրվարի 24-ին գիւնդերալ Նօգի Մուկղեկում էր, բայց նրա գրեւծմանը ոչ մի նշանակութիւն չը տար, իսկոյն և եթ թողեց Մուկղեկը՝ զէպի հիւսիս գնալու համար: Հակառակ սկզբնական տեղեկութիւններին, ռուսների յետ նահանջման պատճառը թիւերը բանակների ճնշումով չէր, այլ արևմտեան զօրքերի և կենտրոնի արշաւումը: Դեռ ևս չէ կարելի ասել, որ Կուրպուսկինը շրջապատված է, բայց յամենայն զէպի նրա գրութիւնը շատ դժուար է: Կուրպուսկի զօրքերը երէկ գրաւեցին Տիտու, Մուկղեկից զէպի հարաւ-արևելք: Եսպանացիների կատարի յարձակումները շարունակվում են: Եսպանական բոլոր հինգ բանակների արշաւում են: Պատերազմական գործողութիւնները ի կատար անվեցին ընդհանուր շտաբի հրամանատարի վարչաց արդէն մշակած պլանով: Արշաւումը կատարվում էր հետևեալ կերպով. նոր կազմակերպված աշ-թիկ բանակը, բազուկացած չորս զիվիզիաներից, գործում էր ռուսական բանակների ձախ թիկ դէմ: Կուրպուսկին բանակը, որ ուժեղացրված էր Կուրպուսկից եկած Խուսիսեանայի զօրքերով, արշաւում էր բանակի արևելեան մասի և ճակատի դէմ Շախէի վրայ: Նօգի բանակը—ռուսների աշ թիկ դէմ: Եսպանական բանակները նոր զօրեղ օժանդակ զօրքեր ստացան: Երկու թիւերը վրայ ևս տեղի ունէին արեւմտեան կռիւներ: Եսպանական կորուստները որոշվում են 35,000 մարդ: ԼՕՆԻՐՕՆ: Եսպանական միստիան հրատարակեց հետևեալ հեռագիրը Տօկիոյից. «Ռուսները,

գրաւած ունենալով զօրեղ դիրքեր Տիտայի մօտ, մի բանի օրվայ ընթացքում յամառ դիմադրութիւն էին ցոյց տալիս, բայց վերջ է վերջոյ փետրվարի 24-ին առաւօտեան ստիպված էին յետ նահանջել և այժմ հարձակում են կապօնական զօրքերի կողմից: Մի ուրիշ զօրքաժին Մարդատունի ուղղութեամբ շարունակում է արշաւումն Փուշուսի վրայ, անհաջար նեղելով ռուսներին Շախէի ուղղութեամբ: Մուկղեկից զէպի հարաւ և արևելք ռուսները դիմադրութիւն են ցոյց տալիս, գրաւելով զօրեղ դիրքեր Սուխիէի ձախ թիկ վրայ: Այժմ եսպանացիների յարձակում են գործում նրանց վրայ զէպի արևմուտք և հիւսիս Մուկղեկից: Ռուսները յուսահատական դիմադրութիւն են ցոյց տալիս: Կատարի յարձակման ժամանակ փետրվարի 24-ին փոշիախառն փոթորիկ բարձրացաւ, որը արգելեց որ և է դիտուեցին անելու: ՄԻՆՍԿ: Բոլոր տպարաններում սահմանված է տաս ժամեայ բանւորական օր: ԽԱՐԿՎՈՎ: Ընդհատված է ապրանքատար երթեկները Միսլովցայի և Սարգիովի միջև: ԲԵՐԼԻՆ: «Նօրդդէյտցե Ալթեմէյնէ Տէլլուստե» լրագիրը կիսապաշտօնական հաղորդագրութեամբ հերքում է գերմանական քաղաքականութեան յայտնած կասկածները Չինաստանում, Գերմանիան օգուտ է քաղում ամեն զէպից Չինաստանի ներքին գործերում խառնակելու համար—Գերմանական կայսրը կերթայ ուղղակի Լիսաբոն, առանց մտնելու Սպանական շրջը: 26 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փետրվարի 20-ին Թագաւոր Կայսրը Ամենաողորմածաւր բարեհաճեց նշանակել Ֆինլանդիայի մինիստրի նախազանութեան տակ գտնված պետութեան բոլոր գործարանների բանւորների վիճակը բարելաւելու համար եղած յանձնաժողովի անդամ նշանակել սենատոր Շիլլովսկու, օրէն-եզերվէյստր Բալաշովին, Կոֆմէյստր Մալկեյնին, ֆինլանդիայի մինիստրի օգնական սենատոր Օթուսկու, երկրագործութեան մինիստրի օգնական Շվալենբախին, ներքին գործերի մինիստրութեան պաշտօնայ Բուկալիշիկովին:— Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճեց նշանակել ներքին գործերի մինիստրի օգնական Վաստաջիին գիւղատնտեսական կարիքների յատուկ յանձնաժողովի անդամ:—Մանչուրական բանակի զինուորական-ընթացիկ վարչութեան հրամանատար գեներալ-լէյտենանտ Նադարովին հրամայված է լինել Մանչուրական բանակի թիկնակողի գլխաւոր հրամանատար: Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Միխայլովիչը ստացել է գնդապետութիւն:— Փետրվարի 26-ի առաւօտեան «Բիստուր» հիւրանոցում մի եկւոր անդիպել, սարքելով մի ռուսը, պայթիւնից սպանվեց և կտոր-կտոր եղաւ: Հիւրանոցի լուսամուտները կտորված են: Կան վերաւորներ: ՏՕԿԻՐ, 25 փետրվարի: Եսպանական բանակ շարժվեց ուղղակի Մուկղեկան ճանապարհով, անցաւ Խուսիսէի և հարձակեց թշնամուն 7 մղոն տեղ զէպի հիւսիս:—Մուկղեկը գրաւելիս եսպանացիները շատ գերինքը առան, նոյնպէս և խրիցին ահագին քանակութեամբ զէպեր, ռազմավթերքեր և պաշարեղէններ: Նրանք դեռ ժամանակ չեն ունեցել շոկելու կամ հաշիւ առնելու այդ աւարը: ՏՕԿԻՐ: 26 փետրվարի: Պատերազմի բեմից եկած վերջին լուրերի համաձայն՝ ըստ երևութիւն եսպանացիները գործում են աջողութեամբ բոլոր կէտերում: Երկայնումս դեռ ևս ռուսական երկու կօրպուս գտնվում են Մուկղեկից արևմուտք, այնտեղ կատարի կռիւ է: Մուկղեկից հիւսիս երկաթուղու գիծը կտրած եսպանական զօրքերը գտնում են զէպի արևելք:— Ենթադրում են, որ ռուսների թիւը խոշոր թիւանութիւնի թիւը հասնում է հարիւրէի չորս պայմանները նպաստում են ռուսների նահանջին: ԼՕՆԻՐՕՆ, 25 փետրվարի: Եսպանական միստիան հաղորդում է հետևեալ պաշտօնական հեռագիրը. «Տօկիո, 25 փետրվարի: Երէկ զէպի եսպանական զօրքերը գրաւեցին Փուշուսը և այժմ յարձակում են գործում ռուսներին վրայ, որոնք անցել են Փուշուսի դիմացի անկիւնային դիրքերի վրայ:» ՄԱՐՍԻՑԸ, 25 փետրվարի: Առաւօտեան ժամանակին տաւրեական շոգեհատով երկու ռուս օֆիցէրներ—Պալիցին և Պոզարով, որոնք ափ լճան Պորտ-Սայիդում: ՎԱՇԻՆԳՏՈՆ: Արտաքին գործերի մինիստրութիւնն ստացել է Տօկիոյի ամերիկական դեսպան Գրիսկովի դեռ չը հրատարակված հե-

ապագայը. նա հաղորդում է, որ եսպոնական զինուորական մինիստրութեան ստացած տեղեկութիւնները համեմատ հասպոնական կորուստները մինչև փետրվարի 23-ը եղել են 500,000 (?): Գրեթե ամբողջ յատուկ ուղարկութիւն է դարձնում մի ամբողջ բրիգադայի կամ 5,000 հոգու սննդանյութ վրայ:

ԼՕՆԻՕՆ: Սըր Սէյմուր Կինգը, որ Հուլիս ներկայացրեցին է պարլամենտում, որ խիստ դժգոհութիւն է յայտնում, որ Հիւսիսային ծովի դէպքի համար միայն 65,000 Ֆունտ ստերլինգ վարձատրութիւն է նշանակված: Հուլիս ձկնորսները այդ գումարը շատ բնէ են համարում: Նա նախազգուշացնում է, որ հետեւի շաբաթ հարցազնուում է անելու, թէ արդեօք բրիտանական կառավարութիւնը մըտադիր է վարձատրութեան մնացած մասը վճարել:

ԿԱՐԳԻՑ. 25 փետրվարի: Երէկ ամիսահանքերում պայթիւն առաջացաւ: Սպանված են 20 հոգի:

ԿԱՆԱԹԱ: Այսօր տեղացիները քաղաքային վարչութեան առաջ նշանաւոր ցոյց արին՝ բողոքելով փոխարքայի արտայայտած վերաւորական մտքերի դէմ տեղացիները վերաբերութեամբ Ամբոխը կասկած յայտնելով այդ խօսքերի խտրութեան մասին, իրան շատ կարգին էր պահում: Կարգն օրինակելի էր:

ՄԻՐՍՏԱՆԻԱ: Նոր կարմիր պաշտօնական հաստատութիւնը տեղի կունենայ այսօր: Բոլոր կուսակցութիւնները վճռել են ընդունել առաջ հրակատուութիւնների հարցը, չը նայելով դժուարութիւններին:

ԲԷԼԳԻԱ: Արմատականները վճռեցին գործել որ և է փոխառութեան դէմ, բացի զինուորականից: Կառավարչական նախագիծը երկաթուղիներ անցկացնելու մասին երկի անաւորութեան կը մատուցի: Կառավարութիւնը ստիպված կը լինի արձակել պատգամաւորներ ժողովը:

ՀՌՕՄ, 26 փետրվարի: Մինիստրութեան կազմակերպութիւնը անխուսափելի է: Փոփոխ կը լինի ներքին գործերի մինիստր և միջնորդ նախագահ. մնացած մինիստրները կը պահպանեն պօստֆէյլները, բացի ժողովրդական լուսաւորութեան և հասարակական աշխատանքների մինիստրներից:

ԳԻՐԻՍՏԱՆ: Վիլհելմ կայսրի գալուստը նշանակված է մարտի 17-ին:

ԼՕՆԻՕՆ, 25 փետրվարի: «Գլոբ» լրագրում խօսվում է Տրեթթի հետ կապված դաշնագրի պայմանների նոր փոփոխութեան մասին: Սկզբնական պայմաններով վարձատրութիւնը պէտք է վճարվէր 75 տարում և այդ ժամանակամիջոցում անդիւրացիները պէտք է գրաւած ունենային Չուվընը հովիտը, բայց ի կատարումն Ռուսաստանին ստուած խոստումների, անդիւրական կառավարութիւնը կիսով պահասիցից վարձատրութեան չափը և սահմանափակից Չուվընի գրաւման ժամանակամիջոցը երեք տարով: Ներկայումս ենթադրութիւն կայ, որ Հնդկաստանի գործերի այստեղի դէպարտամենտը վճարման ժամանակամիջոցը 25 տարի որոշել է թէ՛ այդ փոփոխութեան պատճառով Չուվընի հովիտը նոյնպէս կը գրաւեն 25 տարով, այն ժամանակ Ռուսաստանին ստուած խոստումները ըստ երևոյթի կատարված չեն լինի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փետրվարի 26-ի առաւօտան ժամը 4-ին ճերմաօդ կանաւորված համարներում, Մորսկոյ փողոցի և Վոզնեսենսկի պրօսպեկտի անկիւնում, երկրորդ յարկի սենեակներից մէկում պայթիւն տեղի ունեցաւ, որից կտրատվեցին 4 լուսամուտների շրջանակներ և 20 լուսամուտների բալկոններ: Այդ սենեակում ապրողն սպանվել է: Նա 37 տարեկան էր, ապրում էր անկլիսական անցազրով, որ ստորագրված էր Լուդուիգ Կուսակաճի գլխաւոր հիւպատոսի կողմից: Պայթիւնից թեթև կերպով վնասվել է կից սենեակի բնակչուհիներից մէկը, ստանալով ճակատին և քթին բերծ վաճճներ: Գատական իշխանութիւնը կատարում է նախնական ըննութիւնը:

Table with 2 columns: Item name and value. Includes items like Բորսայի զիւղի սնուր, Պետական 4% ընտան, I թաղար. տոմսերը, II, III, Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ., Բազուի նաւթ. Ընկ., Թիֆլիսի հող. բանկի 5%, Թիֆլիսի հող. 4 1/2%, Բազուի նաւթ. Ընկ. 413

Կասպիական Ընկ. . . . . 4975 — »  
Մանթաշահան և Ընկ. . . . . — — — »  
Նօրէյի և Ընկ. . . . . 10000 — »

Նմանազեր ԱԼԷՔՍԱՆԴԵՐ ՔԱՆԱԹԱՐ  
Հրատարակչներ: ՔԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ  
ԲՍԱՀԱԿ ՄԵԼԻԻ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գողացված են.

- Առձեռն զրամ 1266 ր. 17 Կ.  
Տոկոսաբեր քղեր.  
4 տոմսակ I կարգի խաղաքիւթեան 14864/49, 09819/23, 11496/25, 15265/44.  
4 տոմսակ II կարգի խաղաքիւթ. 17666/8, 14126/27, 01981/31, 10014/7.  
13 տոմսակ III կարգի խաղաքիւթ. 08591/17, 01590/46, 01658/7, 08588/17, 08589/17, 08590/17, 08707/17, 08703/17, 02207/36, 00372/1, 08592/17, 08706/17, 11340/48.

Ա Կ Ե Գ Ի Կ Ե Բ  
Միջոցաւ  
10 ակցիա №5511 մինչև 5520, 10 ակցիա №5521 մինչև 5530—500 բուրլով, գումարը 10,000 ր.

Թիֆլիսի  
10 ակցիա №740, 749—500 բուրլով գումարը 5000 ր.

Թիֆլիսի Առեւտրական Բանկի  
10 ակցիա II հրատարակութեան №8647 մինչև 8656, 10 ակցիա III հրատարակ. №3132 մինչև 3141—500 բուրլով, գումարը 10,000 ր.

Ֆալկլանդների նաւարդիւնաբերական ընկերութեան  
4 ակցիա №96, 97, 98, 99—5000 բուրլով, գումարը 20,000 ր.

Նաբաբեան եւ ընկ. նաւարդիւնաբերական ընկերութեան  
4 ակցիա համարներն անյայտ—5000 բուրլով, գումարը 20,000 ր.

Արամազդ նաւարդիւնաբերական ընկերութեան  
48 ակցիա, №5511 մինչև 5578, 8306 մինչև 8325—250 բուրլով, գումարը 12,000 ր.

Արալօ-Կասպեան ընկերութեան Որոսան՝ Տեր-Մարգարեանի  
52 ակցիա համարներն անյայտ—250 բուրլով, գումարը 13,000 ր.

Նաւարդիւնաբերական Որոսան ընկերութեան  
28 ակցիա №1296, 1297, 1515, 1516, 1349, 1350, 1710, 485, 486, 487, 488, 489, 412, 1131 մինչև 1135, 1115, 1111 մինչև 1114, 1347, 1348, 1661, 1667, 1688, 1609—250 բուրլով, գումարը 7000 ր.

Արամազդ եւ Որոսան՝ Տեր-Մարգարեանի  
60 ակցիա համարներն անյայտ 250 բուրլով, գումարը 15,000 ր.

Գողացված են եղարը Կարապետ և Բեգլար Վարդանեանների մագազինից, Միսի փողոցում, Անանեանի քաղաքացիական: Ով որ գտնի և բերէ, կը ստանայ պատշաճաւոր վարձատրութիւն: 1—1

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Գ. Ա. ՀԱՆՎԵՐԻՒՄ

Մամնազետ միգային և սիֆիլիսի քիմիական հիւանդութիւնների, ընդունում է հիւանդների անաւոտան 12 ժ.—1 ժ. երեկոյան՝ 6 ժ.—9 ժ.: Կուլիկա, Սիեոնօվսկայա փ. № 20. (ա. կ. ե.) 13—30

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱՒԵԱՆ

Նշողնում է յատկապէս միգայնքատակաւան, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունում է հիւանդներ 10—11 ժամին ստաւոտան և 6—8 ժամին երեկոյան: Բտիչկաի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլեֆօն № 11. (ա. օ.) 6—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Արանով յայտարարում է, որ մարտի 3-ին նշանակել է բերանացի անուրդ ձիեր և սայլախմբի մասնակարարի թաղաքի փողոցները և հրապարակները ջրելու և մաքրելու համար. ընդունվում են նոյնպէս գրաւոր յայտարարութիւններ փակ ծրարներով քաղաքային գանձարանը 500 բուրլու գրաւման ստուած լինելու ստացողների հետ միասին. այդ ծրարները Ուլարաւային պէտք է հասցվին ոչ ուշ մարտի 3-ի ցերեկվայ ժամը 1-ից: Պայմանները հետ կարելի է ծանօթանալ Ուլարաւայի ընտրական մասում անին օր, ցերեկվայ ժամը 11—3-ը, բացի տօն օրերից: (Ն. Ե. 2.) 3—3

ԲԺԻԿ Ա. ՄԻՔԱՐԱՆԿ

Ընդունում է մամնազետ սիֆիլիս, սորթու և վնասարական ախտ ունեցող հիւանդների ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուլանօսի, ղեկատան կից: (ա. օ.) 25—80

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԳՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ձեռնարկութիւն Կայսերական Թատրոնների արտօմ Լ. Կ. Իօնիսի  
Այսօր, կիրակի, փետրվարի 27-ին երկու ներկայացում. ցերեկվայ ներկայացումը ընենֆիս Ա. Ֆ. Բառէրի, մասնակցութեամբ Վիլհելմսկայի, Գօնսկոյ-Էյսենվարդի, Միխայլովի, Շիլոնցկոյ-Մինչևկոյի, Սարիտօսովսի. պ. պ. Բրիակովի, Միխայլիսկոյ, Կօմարովի, Պորտրիտովսկոյ և Չալիսկոյ:  
Պարերը կը ընէ բալետմէյստր Ե. Ի. Չիլօսաւի. Պրիմա-բալերինա Ե. Ս. Աննչիկովայ:  
Կը ներկայացվի  
Չ Ի Ի Ն Ա Մ Ա Ն Ո Ի Կ  
օպերա 5 գործ. կրօմ. Բիսկի Կորսակովի:  
Սկիզբը ցերեկվայ ժամը 12 1/2-ին:  
Գրեթե ամբողջ ներկայացում մասնակցութեամբ ամբողջ խմբի. խառն ներկայացում:

1000

Հայ գործիչների նկարներով ԲԱՅ-ԲԱՄԱԿ ներկ արժէքը յատկացված է յօգուտ Բազուի վայրագութիւնների գործնական թշուառ ընտանիքների օգտին: Ստացված գումարները ցուցակով կը յանձնվին «Մշակի» խմբագրութեան:

Գիմու. «Централь-Постъ-Картъ» М. Гнуни, Михайловская 38. Կ. չ. Ե. 5—10

Մեկնելու

պատճառով ծախվում են լուսամուտների մէջտեղի մի հայի և մի բանի իրեր: Բաղնիկի փողոց, 26, Ֆիլիմօսով. (ա. օ.) 3—3

Տպագրվում է եւ մայիսի վերջերին լոյս կը տեսնէ

Լ Է Օ  
ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ (1878—1892), պատկերազարդ, մտաւորապէս 600 երես: Մինչև տրպագրութեան վերջնաւոր շարունակում է ԲԱՅ-ԲԱՄԱԿ ԳՐՈՒԹԻՒՆԻՆԸ: Արեւ հասար անկազմ՝ 3 բուրլ, ճանապարհածախով 4 բուրլ, կազմած՝ 4 ր., ճանապարհածախով 5 ր. 20 կ.: Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի (անկազմ) 4 ր. 50 կօպ. առանց ճանապարհածախի:  
ԹԻՖԼԻՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՄ ԻՄԻՏԱՅԻՆ «ԳՐԱՄՈՒՆԵՐԵՐ» գրավաճառանոցում: Դրսից դիմում են՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». 1—10

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի Հայրապետական կօնդակով փետրվարի 14-ին, համար 134, Թիֆլիսի թեմակալ առաջնորդի նախագահութեամբ կազմված է մի յանձնաժողով, բաղկացած պ. պ. Ա. Ահարոնեան, Հ. Առաքելեան, Իշխան Ալ. Մ. Արղութեան, Արշ. Բաբեան, բժ. Ալ. Սատիսեան, Ալ. Մէլիք-Աղաբեան, Ս. Մէլիք-Աղաբեան, Տ. Յովնանիսեան, բժ. Կ. Ստեփանեան, Լ. Սարգսեան, Ա. Սահակեան և Ալ. Գալանթար Բազուի աղէտի հայ զոհերին նիւթական օգնութիւն հասցնելու նպատակով: Յայտարարելով այս մասին հայ հասարակութեան, յանձնաժողովը խնդրում է բոլոր նուէրները ուղղել բացառապէս յանձնաժողովի գանձապահ պ. Ալեքսանդր Մէլիք-Աղաբեանին (Թիֆլիս, Բէհրուսովսկի փողոց, տուն Գալիօվի) կամ «Մշակի» խմբագրութեան՝ յանձնաժողովին հասցնելու համար: 5—5

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նրանց կեանքը և գործերը (նմուշներով)

- I Բանաւոր գրականութիւն. Գողթան երգեր, ժողովրդական երգեր, աշուղի երգեր, Սաւթ-Նօլա:  
II Գրականութիւն. Տառերի գիւտը (Սահան, Մեքարդ): Գրականութիւնը V դարում. (Բիւզանդ, Ազաթանգիտ, Եղիշէ, Սորենացի, Փարպեցի և այլն): Հ. գրականութիւնը արաբական օրջանում. Կաղանկատպիցի, Յովն. կաթ. Թոմա Արժուրնի, Ատողիկ. Կաթողիկոսի և այլն:  
Հ. գրականութիւնը մուսլիմացի օրով. Բանաստեղծութիւն, պատմագրութիւն և վարդապետական գրուածներ:  
III Անկիւմ օրջան. Բուշակ նահապետ և երգերը:  
IV Վերածնունդ. Միթրաքեաններ (Վենետիկ և Վենեայի), Ալիշան, Պէլիթաշեան, Դուրեան, Պարսեան, Սրուանեան, Մերեցի և այլն:  
Արեւելեան բաժին. Արղիսեան, Նազարեան, Նարեանեան, Ռ. Պատկանեան, Շահաղիկ, Պոռնեան, Գ. Բարեւոլաբեան, Սուրբուկեան, Աղսիսեան, Բաֆի, Շիլօվանգալէ, Մուրաբեան, Լէօ, Ահարոնեան, Պալատեան, Երեցեան, Յ. Յովնանիսեան, Մատուրեան, Թումանեան, Իսահակեան, Շանթ և այլն:  
Միջնակարգ գրքերի համար կազմեց Գ. Վանցեան, գինն է 1 բուրլ, ճանապարհածախով 1 բուրլ 30 կօպէկ:  
Գիմու՝ Թիֆլիս. Коммерческое учили. Ванцианъ կամ Թիֆլիսի գրավաճառանոցին: 4—11

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

„Հայոց հին ճարտարապետութեան նշմարներ“

Գեղարուեստական հրատարակութեան առաջին տետրը՝  
Լ Ո Ս Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ի Ե Գ Ժ Ա Ն Կ Ր Ն Ե Ի  
Քաղաքային ճարտարապետութեան ճեմարանի պրօֆէսոր և ակադեմիկ  
Գր. Կ. Գրիմուի խմբագրութեամբ  
Կազմեցին և հրատարակեցին Լ. Նիլազարեան և Ռուբ. Մարտիրոսեան:  
Այդ հրատարակութիւնը բաղկանում է 10 տետրից—խրաբանչիւրի մէջ 5 (in quarto) լուսանկար ու զմանկար Հայաստանի ճարտարապետական գանալան նշմարներից—համապատասխան բացառութիւններով՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով գրված:  
Տպագրվում է սահմանափակ քանակութեամբ:  
Ընդունվում է բաժանորդագրութիւն հետեւի պայմաններով. ամբողջ հրատարակութեան (10 տետրի) արժէքն է ճանապարհածախով, միանուագ 12 բուրլ, իսկ մաս-մաս վճարելով 13 ր. Այս երկրորդ դէպքում պէտք է առ կանխավճար 2 ր., ապա իւրաքանչիւր տետրը կուղարկվի 1 ր. 10 կ. վերադիր վճարով:  
Այս հրատարակութեան հետ մտնիկից ծանօթանալ ցանկացողները կարող են ձեռք բերել ա տետրը Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցից, վճարելով 1 ր., որ բաժանորդագրութեան դէպքում հարչի կանուխի:  
Ընտեղի տետրերը առանձին չեն վաճառվի: Բաժանորդագրութիւնը վերջնաւորց յետոյ հրատարակութեան արժէքը զգուշ չափով կը թանկանայ:  
Գիմու. Ս.-Петербургъ, институтъ гражданскихъ инженеровъ, 2 я Рота Л. Егизариди. Բաժանորդագրութիւնը ընդունվում է նաև Կենտրոնական գրավաճառանոցում: 4—4

Լուսանկար պարտկերներ

Բարեւոյ զոհերի հոգեհանգիստներ և մաղթանքի նշան ազգերի համերաշխութեան կատարած Թիֆլիսի հայոց մայր կեհիցնու և առաջնորդարանի առաջ 13—14 փետրվարի 1905 թ.

4 ՏԵՍԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՏԸ 50 ԿՈՊ.  
որոնց գումարը 200% որոշված է Բարեւոյ աղէտին «Մշակի» միջոցով: Գիմու կանխիկ վճարով, Тифлисъ Базарная, 22. ФОТОТ. С. СОМОМОНЯНА.

Հ. ուր. Կ. 5—5

ԳԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ  
տեղեկացնում է հասարակութեանը, որ, աչքի առաջ ունենալով քաղաքում տարածված կարմրուկ հիւանդութիւնը, քաղաքային հիւանդանոցի բարակներէց մէկը (Հաւաքար, Նօլօ-Տրօիցի բաժինը) յատկացված է կարմրուկով հիւանդներ համար: 2—2

Թիֆլիսի քաղաքային Ուլարաւան արանով յայտարարում է, որ ներկայ փետրվարի 28-ին ինքը նշանակել է աճուրդ կապալով տալու Ալեքսանդրեան այգու ներքին մասի մի հողաբաժին՝ իրան բուրվա շինելու համար: Պայմանները հետ կարելի է ծանօթանալ Ուլարաւայի 4-ր բաժնում, ցերեկվայ ժամը 10—2-ը: Կ. 2—2

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Ե Ր Ա Ձ

(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5

Վաճառվում է Միլք. Եսայեանի  
Ե Ր Ա Ձ  
(պատկեր Բալախանու կեանքից)  
Գինը 3 կօպ. (ա. օ.) 5—5